Արձանագրություն 3

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/156» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 02.08.2019թ.

Ժամը՝ 10:30

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Յ. Մամիկոնյան /ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Բաղրամյան /գնահատող/, Ա. Գասպարյան /գնահատող/, Մ. Աբրահամյան /բացող/, Լ. Մուրադյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Եղիազարյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Յ. Մամիկոնյան)

Ընդունել ի գիտություն, որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել էր եզրակացություն, համաձայն որի մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ մեկ մասնակցի՝ Ա/Ձ Կարեն Միքայելյանի, ում ծանուցվել էր սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունը:

<<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 48-րդ կետի համաձայն մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը:

1.2 «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/156» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակիցների կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են հրավերի պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/156» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների մասին

(Յ. Մամիկոնյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունած որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/156» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի

-1-ին, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Լուառ» ՍՊԸ-ն,

2-րդ, 3-րդ, 5-րդ, 11-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ն և

7-րդ, 10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Կարեն Միքայելյան Ա/Ձ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Յ. Մամիկոնյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակիցներին:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի նախագահ՝ *Յ. Մամիկոնյան* _____

Հանձնաժողովի անդամներ՝ *Ա. Բաղրամյան* _____

Ա. Գասպարյան _____

Մ. Աբրահամյան _____

Լ. Մուրադյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝ *Մ. Եղիազարյան* _____